



# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 223/57

«14» դեկտեմբեր 2017

## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՎՃԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներով.

հ ր ա մ ա յ ու մ ե մ

1. 2017թ. ԵՊՀ եկամուտների և ծախսերի նախահաշվի «Աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ և դրան հավասարեցված վճարումներ» հոդվածով նախատեսված միջոցների հաշվին ԵՊՀ-ում հիմնական աշխատանքային պայմանագրով աշխատողներին վճարել տարեվերջյան դրամական պարգևատրում՝ սույն թվականի դեկտեմբեր ամսվա համար նրանց հիմնական աշխատանքային պայմանագրով հաշվարկված աշխատավարձի չափով՝ բայց ոչ ավելի քան մեկ դրույքը:

2. Սույն հրամանի 1-ին կետով սահմանված պարգևատրումը չի վճարվում 2017թ.-ի հունվարի 1-ից հետո կարգապահական տույժի ենթարկված ԵՊՀ աշխատողներին, ԵՊՀ-ում 2017 թվականի ընթացքում ընդհանուր առմամբ վեց ամսից պակաս աշխատանքային ստաժ ունեցող ԵՊՀ աշխատողներին, գիտական և գիտատեխնիկական աշխատանքներում ներգրավված անձանց, ինչպես նաև տնտեսվարական եղանակով գործող կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողներին:

3. Վեց ամսից մինչև մեկ տարի աշխատանքային ստաժ ունեցող ԵՊՀ աշխատողների համար պարգևատրումը հաշվարկվում է փաստացի աշխատած ամիսներին համամասնորեն:

4. ԵՊՀ գլխավոր հաշվապահին՝ սույն հրամանով սահմանված դրամական պարգևատրումը վճարել 2017թ. դեկտեմբերի 15-ից:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ

Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ